ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№20/1-71576 «25» 12 2014թ.

<< ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ>>.ՀԿ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
/Ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Երևանի քաղաքապետարան հասցեագրված Ձեր 19.12.2014թ. հ.14/71576 (բանալի՝ 828780) գրության՝ կապված Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.82 հասցեում գտնվող հողամասի սահմանների ճշտման և հողօգտագործման իրավունքի ձևակերպման խնդրի հետ, հայտնում եմ հետևյալը.

Բարձրացված հարցը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների կողմից ուսումնասիրվել է: Արդյունքում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունը դեռևս 17.07.2012թ. հ.18-06/1-Ա-4086 գրությամբ տեղյակ է պահել Արմանուշ Ամիրխանյանին, որ Երևանի քաղաքապետարան հասցեագրված փաստաթղթերի փաթեթում ներկայացված հողի սեփականության իրավունքի ակտը պատճենահանված է վատ և ընթեռնելի չէ:

Տարածքի տեղազննումից և տեղագրական հանույթի ճշգրտումից /ճշգրտված տեղագրական հանույթը ունի մոտ 2,5 տարվա վաղեմություն/ պարզվել է, որ վերոհիշյալ հասցեում գտնվող հողամասի մակերեսը կազմում է 200.0քմ, որի նկատմամբ Արմանուշ Ամիրխանյանի հողօգտագործման իրավունքի ձևակերպման խնդրի հետ կապված Երևանի քաղաքապետարանը հայտնում է իր պատրաստակամությունը բարձրացված հարցը սահմանված կարգով քննարկելու, ինչի համար անհրաժեշտ է քաղաքապետարան ներկայացնել հողի սեփականության իրավունքի պետական ակտի բնօրինակը, որի տվյալները դիմումին կից ներկայացված փաստաթղթերի հետ համեմատելուց հետո կվերադարձվի հողօգտագործողին:

Աշխատակազմի անշարժ գույքի
կառավարման վարչության պետ՝ Ա.ԱՄՅԱՆ

Ա.Բաղալյան
Ս.Չոլախյան
Հեռ.514-206